

ՅՈՒՐԵԼԵԱՆ

ԴՈԿ. Տ. ՆԵՐՍԵՍ ԱՎ. ՔՆՆ. ՆԵՐՍԵՍՅԱՆ

**«ՏԷՐ, ԿԵՅՈ ԴՈՒ ԶՆԱՅՍ» ԵՐԳԻ ՆԵՂԵՆԱԿԻ
ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԲԱՅԱՆԱՅՏՈՒՄԸ
(ՆԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ 500-ԱՄՅԱԿԻՆ)**

1993 թ. Indian Office Library-ի ողջ արխիվը միացվեց Բրիտանական գրադարանի հավաքածուին: Այդ հավաքածուի մեջ հայտնաբերվեցին բազմաթիվ նյութեր հայ-անգլիական դիվանագիտական առնչությունների վերաբերյալ: Նոդվածիս նյութը վերաբերում է մի կոնդակի՝ գրված Եփրեմ Ա. Ձորագեղցի (1809-1830) Կաթողիկոսի կողմից, թվագրված՝ «յամի փ[եառ] 1913 յամսեանն օգոստոսի 3 յրրորեն [յԱրարպեան] Աթ[ո]ռ ս[ուր]բ Էջմիածին»: Կոնդակն ուղղված է «Բարձր գերաշուք եւ մեծ դեսպան յաղթող Տէրութեան Բրիթանիոյ Սըր Գոր Օզլի»-ին (1770-1844): Կոնդակն այժմ ներգրավված է Բրիտանական գրադարանի հայկական հավաքածուի մեջ եւ կրում է Or. 15957 համարը (1): Կոնդակի պարամական նշանակության եւ դրան առնչվող դեպքերի մասին փնս մեր հոդվածում (2):

Սըր Գոր Օզլին Անգլիայի ամենահայտնի դիվանագետներից էր, որի դեսպանության շրջանին Պարսկաստանում կնքվեց Գոլեստանի խաղաղության պայմանագիրը Ռուսաստանի եւ Պարսկաստանի միջեւ 1813 թ. հոկտեմբեր 13-ին (3): Կոնդակի մեջ Ամենայն Տայոց Կաթողիկոսը շնորհակալություն է հայտնում Սըր Գոր Օզլիին, որ նա իր նվիրակ Վրթանես արքեպիսկոպոսից «յընկալուլն ձեր գխնդիր մեր եւ սուրբ ժողովոյն մերոյ... զմեծ շնորհակալութիւն եւ խնդրեմք դարձնալ զայդպիսի շնորհ բարերարութեան եւ քաղցր ակնարկութեան ձերոյ անսպառ առնել ի մէջ եւ ի սրբոյ Աթոռոյս Արարպեան»: Այս հույժ գաղտնի հաղորդակցությունից դժվար է կռահել, թե «խնդիր մեր եւ սուրբ ժողովոյն» ինչին է վերաբերում եւ խնդրագիրն ո՞ւմ է ուղղված, որի համար Կաթողիկոսը հայցում է Սըր Գոր Օզլիի միջնորդությունը Պարսկաստանի իշխանությունների մոտ: Եւ երկրորդ փուլերը վերաբերում է որոշ փաստաթղթերի, որոնք դեսպանի խնդրանքով թարգմանվել էին պարսկերեն. «Ոմանց թղթոց թարգմանութիւն ֆարսերէն զոր հրամայեալ էիք առաքել՝ ահա առաքեցաք»: Տիշյալ կոնդակի պարամական նշանակությունը՝ թվագրված 1813 թ. հոկտեմբեր 13, պետք է սերտորեն կապել Գոլեստանի դաշնագրի ստորագրության հետ, որը փոխվեց 1813 թ. սեպտեմբերի 20-ին՝ Ռուսաստանի եւ Պարսկաստանի միջեւ (4):

Ռուս կառավարությունը վաղուց էր ըմբռնել Ամենայն Տայոց Կաթողիկոսական Աթո-

ռի կարեւորությունն իր արեւելյան քաղաքականության մեջ և այդ պարագայում վաղուց աշխարհում էր իր ազդեցությունն ապահովել այդ համագաղափար հոգևոր հաստատության վրա: Այս անհրաժեշտություն է դառնում 1801 թ., երբ Ռուսաստանը Անդրկովկասն իրեն միացնելու անվերապահ քաղաքականություն որդեգրեց: Պարսից կառավարությունն իր հերթին զգում էր, թե ինչքան վրանգավոր էին ռուսական ուրնագություններն իր փրկապետության վրակ գրավող Էջմիածնում: Սկսվում է համառ մի մրցակցություն երկու հզոր պետությունների միջև, որն ավարտվում է 1828 թ., և Տալասի պայմանագրով Երևանի շրջանը և Գորիսի շրջանը (5): Անգլիան 1813 թ., թեև Ռուսաստանի դաշնակիցն էր, չէր դադարել իր երկերեսանի պառակտիչ քաղաքականությունը և շարունակում էր զենք մարտավարել Պարսկաստանին: Այս ժամանակաշրջանում Անգլիայի դիվանագիտական կազմի ամենակարկառուն դեմքերից մեկը՝ Սըր Գոր Օզլին Պարսկաստանում նշանակվեց Անգլիայի դեսպան, և թե՛ Ռուսաստանը, թե՛ Պարսկաստանն սկսեցին բանակցություններ վարել խաղաղության պայմանագիր կնքելու նպատակով: Նապոլեոնի անփառունակ փախուստը Մոսկվայից պարպուպարշաճ պապություն թողեց Պարսկաստանի վրա և սփյառեց նրան ընդունել հաշտության անհրաժեշտությունը: Այս բանակցություններին իր եռանդուն մասնակցությունը բերեց Սըր Գոր Օզլին: Մի հանգամանք, որը «հասկանալու համար դարձյալ պետք է նկատի առնել Նապոլեոնյան սաստիկ պարպուսությունը ռուսական ձյուններից» (6):

1809 թ. Եփրեմ Ա. Չորագեղցին դարձավ Ամենայն հայոց Կաթողիկոս: Թե՛ Ռուսաստանը, թե՛ Պարսկաստանը նրան համարեցին օգտակար անձնավորություն, քանի որ արդյունավետ դեր կարող էր խաղալ «ռուսական շահերին նվիրված Ամենայն հայոց Կաթողիկոսը» Պարսկաստանի հեղափոխական հարաբերությունների մեջ» (7): Յար Ալեքսանդր Ա.-ն շտապ հաստատեց Եփրեմ Չորագեղցու ընտրությունը և ցանկություն հայտնեց տեսնել նրան: Եփրեմը գնաց Պեդերբուրգ, և ցարը նրան պարգևատրեց Մուրբ Ամենայն առաջին աստիճանի շքանշանով: 1810 թ., երբ Եփրեմ Չորագեղցին հասավ Էջմիածին, ռուսների և պարսիկների միջև շարունակվում էր պարտերազմական վիճակը: Իմանալով հանդերձ Եփրեմ Կաթողիկոսի ռուսահայաց կողմնորոշումը, այնուամենայնիվ, պարսիկ Աբբաս Միրզան, որն այդ ժամանակ իր բանակով գտնվում էր Արարատյան գյուղի մոտ, հրամայեց, որ հայրապետին դիմավորեն բարձր պատիվներով: Այս կոնդակը, որի գոյությանը ոչ մի հեղինակ ծանոթ չէ, հաստատում է Եփրեմ Կաթողիկոսի՝ «Ռուս-պարսկական հաշտության պայմանագիրը նախապարաստելու ժամանակ կողմերի միջև հանդես գալը որպես միջնորդ» (8), և դրա փոխարեն նա Անգլիայի դեսպան Գոր Օզլին խնդրել է բանակցությունների ժամանակ ի միջոցում նաև հայ Եկեղեցու շահերը և պահանջել Պարսկաստանի թագաժառանգից, որ կասեցնի պարսիկ խաների բռնությունն ու կեղերումը Էջմիածնի հանդեպ (9): Սըր Օզլին եղբայր էր միաժամանակ անձնական քարտուղար Սըր Վիլիամ Գոր Օզլին իր հիշողությունների մեջ գրում է. «Ուրբաթ, հունվարի 13-ին, 1815 թ. ինձ այցելության եկավ մի հայ արքեպիսկոպոս, որն ինձ մաղթեց բազում երջանիկ նոր տարիներ, նաև շնորհակալություն հայտնեց իր ազգի անունից այն պաշտպանության և նախաշնորհների համար, որ ես հաջողեցրել էի ձեռք բերել հայերի համար Պարսկաստանում» (10): Մի այլ

հավասարի աղբյուր, որը հաստատում է հարաբերությունը Եփրեմ Կաթողիկոսի և Սրբ Գոր Օզլիի միջև, մի հայկական ձեռագիր Ավետարան է՝ ընդօրինակված 1668 թ., որն այժմ պահվում է Իռլանդիայի հայրնի Չեստեր Բիսպի գրադարանում: Ձեռագրի երկրորդ չհամարակալված թերթիկի վրա կա այս արձանագրությունը.

His High Excellency Sir Gorozli (i.e. Sir Gore Ouseley), the ambassador of the English, who had come to be ambassador to the Shah of Persia Fatali (i. e. Fath'Ali), while returning to his country with his family, passed by this holy see of Ararat. He showed much solicitude for us and all our congregation. Because of this, as a token of unforgettable love and a perpetual memorial, and as an occasion for blessings on the victorious kingdom of Britain, we offered this small Gospel to His Excellency. June 4, 1814, at holy Etchmiadzin.

(signed) Eprem Patriarch and Catholicos of all the Armenians (11):

Այս այցելության վերաբերյալ երկու ակնապեսների վկայություններ կան: Առաջինը Սրբ Վիլիամ Օզլիին է և երկրորդը՝ Ջեյմզ Մորիերիին, որոնց պապավորությունները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վանքի, միաբանության, թանգարանի մշակութային գանձերի, ձեռագրապան վիճակի և Եփրեմ Կաթողիկոսի անձի մասին չափազանց մանրամասն են և պապավորիչ (12):

1985 թ., երեքշաբթի, 26 նոյեմբերի Սողբիզ ընկերությունը վաճառեց Եփրեմ Կաթողիկոսի կոնդակը՝ ուղղված անգլիացի հայրնի ճամփորդ Սրբ Ռոբերթ Պորպերին՝ թվագրված Կոստանդնուպոլիս, 15 ապրիլ, 1820 թ.: Սա մի պարասխան նամակ է՝ գրված Սրբ Ռոբերթ Պորպերի կողմից Եփրեմ Կաթողիկոսին՝ թվագրված Կոստանդնուպոլիս, 22 մարտ, 1820 թ. (13): Սա երկրորդ անգլիացի ուղևորն է, որ այցելել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին երկու փարբեր առիթներով և հանդիպումներ ունեցել Եփրեմ Կաթողիկոսի հետ: Առաջին այցելությունը տեղի է ունեցել 17 նոյեմբեր, 1817 թ., իսկ երկրորդը՝ 19 հոկտեմբեր, 1819 թ. (14): Սրբ Կրթ Պորպերն իր հիշողությունների մեջ՝ հոկտեմբեր 29, 1819 թ., ունի հետևյալ գրառումն իր և Նայոց Կաթողիկոս Եփրեմի հանդիպման մասին.

“October 29th - Ephreme, the venerable patriarch, received me with every kindness I had anticipated, a sort of parental welcome, no doubt belonging to the sacred character when so secluded from the world at large, which, from that circumstance, inclines him to consider all who approach him with the feeling of a hospitable man and a Christian father. It being Friday, he was obliged to allow me to dine alone. But he gave orders to a steward of his household, who was also a monk, to make me a suitable repast, and to do so its honour” (15): Նյութը նկատման նկարագրության այս հանգրվանին Սրբ Կրթ Պորպերը կատարում է մի շատ հետաքրքիր գրական նշանակություն ունեցող ակնարկ, որը հայ բանասերներն անտեսել են իրենց զբաղեցնող մի շատ կնճռոտ հարցի առնչությամբ: Նա գրում է, որ վանականներից մեկը՝ “volunteered a psalm; the words of which, he told me, were his own, but the music English. Of course I accepted as graciously as it was offered; and when sung, it turned out to be our national air of “God save the King”, but most woefully mutilated in its long journey. However, the good-humoured benevolence of the smiling monk, who evidently only sought the amuse me, sweetened his notes; and I enjoyed the simple, and often very sensible remarks of both brothers, during a conversation which occasionally referred to subjects of my late travels” (16):

Նայ վանականի երգած երգը «Տէր, կեցո դու զՆայս» ուրանավորն է (17), որի հեղինակության հարցը մնում է չլուծված առ այսօր: Լեւոն իր՝ Մեսրոպ Թաղիադյանին նվիրած աշխատության մեջ այս մաղթանքի հեղինակ է համարում վերջինիս՝ պարճառաբանելով, որ մաղթանքը լավագույն կերպով արտահայտում է հեղինակի «քաղաքական քննչերը... քրեանել Արարաբյան աշխարհում վերանորոգված հայ թագավորություն... այս է նշանակում վերջին քան մեջ «Զոմն ի մենջ յարո, արքայ ազգի մերոյ» (18): Միքայել Նալբանդյանն իր «Մոեղիահարցուկ» վեպի մեջ բերում է մի ռոմանտիկ պարմություն «Տէր, կեցո դու զՆայս» երգի մասին: Նա պարմում է. «Յանկարծ, այս միջոցին, Կոմս Էմմանուէլի ականջին հասաւ մի ֆորպոպիանօի ձայն... Ուշադրութեամբ ականջ դնելով հասկացաւ, որ ածում էին «Տէր, կեցո դու զՆայս» երգի եղանակը: Տիրացուն նկատեց, որ այս ձայնը քաղաքային գործեց Կոմսի վերայ, վասն որոյ եւ ասաց. «Ես իմանում եմ, թե ով է դորա ածողը. ահա, այն սպիտակ քանից է լսում... Մահաբեսի Թովմասի քանից, նորա դուստրն է ածողը: Արդարեւ մի վայրկեանից յետոյ լսուեց մի քնքուշ եւ թարմ կանացի ձայն»: Նա երգում էր երգի այս կտորը, ուր հայցում էր, որ «Աստուած հաւաքէ հայերին Արարաբեան աշխարհը»: Միքայել Նալբանդյանը եւս երգի հեղինակ համարում է Մ. Թաղիադյանին այն միակ փաստի հիման վրա, որ երգը, որն առաջին անգամ տպագրվել էր 1820 թ. «Նայելի Կալկաթեան» շաբաթաթերթում (19), 27 փարի հետո՝ 1847 թ., վերահրատարակվում է Թաղիադյանի կողմից՝ իր հիմնած «Ազգասէր» հանդեսում (որը հետագայում վերանվանվեց «Ազգասէր Արարաբեան», 1848-1852) (20): Այսպէս Թաղիադյանը տպում է երգը «Ն. Ա.» ստորագրությամբ, որը հապավումն է «Նայելի Կալկաթեան»-ի: Մ. Նալբանդյանը բոլորովին արհամարհում է այս ծանոթագրությունը եւ երգը վերագրում Մեսրոպ Թաղիադյանին՝ այն համարելով վերջինիս «բոլոր գործերից ամենահռչակված» («Տէր, կեցո դու զՆայս») ուրանավորը, որը դեռ այսօր էլ հնչում է իբրեւ ազգային օրհներգ (21):

Նենվելով Միքայել Նալբանդյանի քննակերպի վրա՝ բազմաթիվ հեղինակներ շարունակել են վերաբայել այս երգը որպէս Մեսրոպ Թաղիադյանի բանաստեղծական սրելծագործություններից մեկը: Գրիգոր Նարությունյանն իր «Նորահայր նյութեր Մեսրոպ Թաղիադյանի մասին» ուսումնասիրության մեջ հաստատում է Միքայել Նալբանդյանի վերագրումը՝ ասելով. «Թաղիադյանի ազգային սրելծագործություններից քաջ հայտնի է «Տէր, կեցո դու զՆայս» բանաստեղծությունը, որը շատ վաղուց երգվում էր ժողովրդի մեջ», եւ որի «մասին հիացմունքով է արտահայտվել մեծ դեմոկրատ Միքայել Նալբանդյանը» (22): Մ. Մ. Միանասարյանցն իր խմբագրած «Քնար հայկական» ժողովածուում տպում է այս երգը՝ նույնպէս Թաղիադյանին վերագրելով (23): Բանասեր եւ խմբագիր Սիմոն Սիմոնյանն «Արեւելահայ գրականության» մեծածավալ աշխատության մեջ Մեսրոպ Թաղիադյանի հեղինակած գրությունների նմուշների շարքում հրապարակում է նաեւ «Տէր, կեցո դու զՆայս» բանաստեղծությունը՝ «Օրհներգության Ազգային» անվան տակ, հետեւյալ ծանոթագրությամբ. «Նակառակ գրաբարով գրուած ըլլալուն՝ իբրեւ բացառութիւն կը դնենք այս քերթուածը, որն ազգային օրհներգ մը եղած է (եւ է), եւ որ Մեսրոպ Թաղիադեանը ամենէն աւելի բնորոշող գրութիւնն է» (24): Իսկապէս, այնքան սիրված է

եղել օրներգը, որ Խոբրեն վ. Գալֆայանը դրա նմանությամբ գրում է իր «Աղօթք վասն Նայրենեաց» երգը՝ ձոնված «Առ արժ. Սարգիս վ. Թեղոթեան», որն սկսվում է այս բառերով. «Տէր, կեցո ըզՆայասարան» (25):

Բայց բոլորը չէ, որ հեպտել են Միքայել Նալբանդյանին: Դեռ 1937 թ. եւ կրկին անգամ 1947 թ. Արշակ Ալադյանը երկու հոդված է գրում՝ «Կրկնում սխալներ. «Տէր, կեցո դու զՆայս» երգին հեղինակը» եւ «Նամակ խմբագրության. ճշտում մը», որոնց մեջ նա փաստում է, որ «ամեն փարակուսէ դուրս է, որ Մեսրոպ Թաղիադեանց չէր այս երգին հեղինակը», որովհետեւ՝ «ա) 1820-ին, երբ այս երգը կը հրապարակուէր Կալկաթային մէջ, Մեսրոպ Թաղիադեանց հազիւ 17 փարեկան պատանի մըն էր (ծն. 1803 - մի. յունիս 10, 1858), եւ կը գրուէր Էջմիածին ու ոչ մէկ յարաբերութիւն ունէր Նոյկասարանի հետ, ուր գացած էր 1823-ին, երգին հրապարակութենէն երեք փարի վերջը». եւ «բ) որ այս երգը վստահօրէն կրնանք ըսել, թէ խմբագրուած է հետետղականութեամբ կամ նմանողութեամբ անգլիական ազգային երգին՝ «Տէր, կեցո զթագավորը» (26): Եւ եզրակացնում է. «առանց շարք վստահութեան, կրնանք ենթադրութիւն մը ընել»: Առանց որեւէ հիմնական վկայության նա առաջարկում է, որ երգի հեղինակը «Նայելի Կալկաթեան» շաբաթաթերթի խմբագիր Նովիաննէ Տեր Նակոբյանն է: 1847 թ. Մեսրոպ Թաղիադեան իր «Ազգասէր» հանդեսում «կ'արտաբայէ այս երգը, անոր փակը դնելով Ն. Կ. սկզբնաբառերը, իբրեւ նշանակ «Նայելի Կալկաթեան»-ի (27):

Ո՞վ է այս երգի հեղինակը: Պատասխանը վերջնականապէս գտնվում է կալկաթյան մի նորահայտ հրապարակության մէջ: Գիրքը հանգուցյալ Սիմոն Սիմոնյանի հնարիւր գրքերի հավաքածուի մէջ է, որին ծանոթացա 1988 թ.: Գրքի փոխդասարէրթի ողջ բովանդակությունը հետեւյալն է.

[Տիպոդոս] «Արքայութիւն, որ է Տալի Տրամահալած: Յօրինեալ եւ ըստ մասին թարգմանեալ՝ աշխատասիրութիւնամբ բանասիրին Պարոն Յ. Յ. Աղանորեանց:

[Բառայակ] «Վերգելէոս 14 գիրս մշակականք»-ից:

[Արդարության զինանշան՝ կազմված մի առյուծով եւ կնոջով՝ ձեռքին բռնած կշիռ եւ սուր: Մեջտեղը ձվածն վահան՝ վերելից զարդարված խաչի պատկերով, իսկ ներքեից՝ ժապավենափայլ զարդով]:

Խաչի թելերի չորս անկյուններում փեղադրված են հետեւյալ մեծաբառերը.

Խ = Խոհեմութիւն (Prudence)

Ա = Արդարութիւն (Justice)

Ա = Արիութիւն (Fortitude)

Բ = Բարեխառնութիւն (Temperance)

Ձվածն վահանի մեջտեղում շարք մանր գրերով գրված է՝ «Ծանիր գրեզ»: Վահանի լուսանցքում փեղադրված է հեղինակի անունը՝ «Յովհաննէ Յարութիւն Աղանորեանց»:

Զինանշանը զարդարող ժապավենի մէջ կա այս բացատրությունը . «Արդարն իբրեւ գառիւծ յանձն ապաստանի»:

[Տպարանի վայրը, փայտանափիրոջ անունը եւ փայագրության թվականը] Կալկաթա, ի Տպարանի Անտր եւ Յովհաննէ Ջնթում Անտրեան, 1819:

Գրքի առաջին էջի հանդիպակաց չհամարակալված թերթիկի վրա փեղադրված է նվիրաբերի հիշատակարանը.

«Ի Սեղապատ 1825: Նիրկան 30. ընծայեցի փոքրիկ փաղարանս այս մեծապարիս բարեկամին իմոյ Պարոն Յարութին Յ. Աին վ[ա]սն ի սեր բարեկամութեան հասարար մնալոյ... փ[ե]լ Մարտիրոսից»:

Գիրքը ներառում է ընդամենը 84 էջ (18 x 14.5 սմ)

1 - 17. Բանաստեղծություններ՝ միայն հայերեն

18 - 79. Հայերեն բանաստեղծություններ՝ անգլերեն թարգմանություններով

80 - 84. Ծանոթությունը: Յարուկ անուանց պարունակելոց յընթացս մարենիս՝ ըստ այբուբենի:

Ծանոթություններից ընթերցողի ուշադրությանը կուզեի հանձնել միայն այս երկու կետեր: Նեղինակն իր գրքի վերնագրի ընկալությունը բացատրում է այսպես. «Արարուր, նաև ասի՝ Աբելաձագ (է նոյն որ առ անգլիացիս կոչի Lark). է թռչուն ինչ փոքրիկ քան զթութակ է մեծագոյն քան զծիճառն, որոյ փեսակք են քսան եւ ութն. որք քաջայայտ են ընդ բովանդակ Հայաստան աշխարհ: Արարուրն է այնպիսի գերազանց թռչուն մի քաղցրաբարբառ, մինչ զի՝ թէպէտ է լսի ձայն նորա հանապազ ընդ բոլոր անդաստանս Հայաստան աշխարհի՝ յաճախութիւն երգոց իւր ոչ կորուսանէ: զիւրն արժանատրութիւն, բայց եթէ հրաւիրէ զմեզ կրկին առ ի ունկն մարտցանել, եւ գրգռէ նրկորոյաբար զգացումն մեր եւ զերկրութիւնն: Քաղցրութիւնն՝ պէսալիսութիւն եւ նշանակութիւն երգոց սորա զերի առնէ զմեզ ի հաւանութիւն փեսարանաց՝ որք շուրջ պարեն զմեօք, յորժամ չքնադազնոյ հայեցուածն դաշտին փայ փոխաբարբար երգոյ նորա զվեհագոյն իմն ազդեցութիւն: Արարուրն ունի զճոյզ ի գլուխ իւր եւ կրտուց նորա է նուրբ եւ մանր, թիկունք եւ թեւք իւր ի թուխս պիսակացեալ. կզակն սալիտակ, եւ լանջք դեղնագոյն հանդերձ պուր պուր սեւորակաւ» [էջ 80-81]:

Տիրոջստաթերթի Խ. Ա. Ա. Բ. հապավումների համար նա փալիս է այս մեկնությունը. «Խ. Ա. Ա. Բ. չորեքին փառքս յանկիւնս խաչին, որ ի ճակատ մարենիս՝ նշանակեն զչորս կարդինալական առաքինությունս՝ Խոհեմություն, Արդարություն, Արիություն եւ Բարեխառնություն. որք եւ առ անգլիացիս ասին՝ Prudence, Justice, Fortitude and Temperance» [էջ 83]:

Այս հատորի ամենատուշագրավ բանաստեղծությունը զբաղեցնում է 54-57 էջերը, որը վերջնականապես լուծում է հայ բանասիրության կնճռոյ հարցերից մեկը: Արշակ Ալպոյ-յաճյանն իր հոդվածում, առանց հեղինակի ինքնությունը բացահայտելու, վստահ է, որ «Տէ՛ր, կեցո՛ղ ո՞ր զՆայս» երգի հեղինակը «կը պարկանի հնդկահայ միատրականութեան եւ հաւանօրէն **Հայեւի Կապաթեան**-ի խմբագիրը՝ Յովհաննէս Տէր Յակոբեանն էր, թերեւս անգլերէնի գիտակ մէկը, վասնզի թերթին մէջ բազմաթիւ թարգմանություններ կան այդ լեզուէն» (28):

Այս երգի սկզբնական թարգմանությունն անգլերենից-հայերենի պարկանում է Ն. Ն. Աղանուրյանի գրքին, եւ առաջին անգամ հրատարակվել է «Արարուր» գրքում, Կապաթայում՝ 1819 թ. եւ ո՛չ թե «**Հայեւի Կապաթեան**»-ում: Երգի հայերեն թարգմանությունն իր անգլերեն բնօրինակով փալված է կից էջերում: Վերափաղարում ենք այնպես, ինչպես փալված է՝ հարազատ մնալով շարվածքի բոլոր մանրամասնություններին:

ՏԱՂ ԴԻՖԱԶՆԱԿԱՆ

AN HEROICK VERSE

Ի վերայ նորին վեհափառությանն Գեորգեայ
Երրորդի՝ օգոստոսիան արքայի
մեծին Բրիթանիոյ:

On His most Excellent majesty George the third
King of Great Britain

ՏԵՐ, ԿԵՅՈ ԶԱՐՔԱՅՆ

GOD SAVE THE KING

1

1

Տէ՛ր, կեցո՛ Զորջ արքայն,
վրսեմ կեալ՝ ընդ երկայն.
կեցո՛ գարբայն,
Յղեա նմա՝ յաղթութիւն,
փառք եւ երջանկութիւն
կապարել՝ զպարութիւն,
երկար առ մեօք:

God save great George our king
Long live our noble king.
God save the king!
Send him victorious
Happy and glorious.
Long to reign over.
God save the king.

2

2

Ո՛վ Կրէր մեր՝ Կրէր ծագեա՛,
թշնամիս՝ զիւր ցրուեա՛,
եւ գլխութեա՛,
Խառնեա՛ զնոցուն վարել,
ջնջեա՛ եւ զհնարել,
ի նա սիրպը՝ մեր մածել,
Ո՛վ, կեցո՛ զմեզ:

O Lord our God arise
Scatter his enemies
And make them fall!
Confound their politics,
Frustrate their knavish tricks;
On him our hearts we fix .
O save us all.

3

3

Զիրք քո ի նա լիով
հաճեաց հեղուլ փութով,
կեցցէ երկայն:
Զօրէնս մեր՝ պահիցէ,
միշտ մեզ նա դարս փացցէ,
առ յերգել՝ ի սըրպէ,
կեցցէ արքայն:

Thy choicest gifts in store
On him be pleas'd to pour,
Long may he reign!
May he defend our laws,
And ever give us cause,
To sing with heart and voice,
God save the king.

4

4

Թող երկար՝ սիրութիւն
նմա եւ զմիութիւն,
միշտ աճեցո՛,
Ըզտուր իւր՝ նա բարձեալ,
ճիշդ մարդիկ՝ անասցեալ
միասիրտ՝ վերօրհնեալ,
Տէ՛ր, կեցո զնա:

O! grant him long to see
Friendship and unity
Always increase:
May he his sceptre sway,
All loyal souls obey,
Join heart and voice huzza
God save the King.

«Արարուր» գրքի հեղինակը, դրա մեջ անգլերենից-հայերեն թարգմանած բանաստեղծությունների, այդ թվում նաև «Տէր, կեցո զարբայն» տաղի թարգմանիչը Հարություն Ն. Աղանուրյանցն է (29): Այս ջողայեցի հայրնի գերդաստանի ձեռագիրը Գրադարանի հայկական հավաքածուի մեջ: Այս հոդվածի հեղինակը սույն ձեռագիրը գնեց Աղանուրյանց գերդաստանի շառավիղի լոնդոնաբնակ վերջին ներկայացուցչից՝ Ալեքս Նիկոլասից: Ձեռագիրը կրում է Նմ. Or. 14359 և ունի այս վերնագիրը. «Եկեալն ի Նին Զողայէ ի 1054 թուին հայոց ևս յամի տեառն 1605: Յեղաբանութիւն Կոնստնտինոպոլսեացի Աղանուրեանց գոր վարեալ մեծ ևս Առաջին Շահ[ա]բաս արքային Պարսից ի Նայասարան Աշխաբէ ևս ի Նախիջևան գաւառէ ի Պարս ևս ի Կոնստնտնուպոլսէ ևս ի Երևան ևս ի Երզնկայ ևս ի Նոր Զողայ» (30): Տոհմաձառն ընդգրկում է Աղանուրյանց գերդաստանի արու գավակների անունները՝ 1605-ից մինչև 1890: Հարություն Աղանուրյանի անունը տեղադրված է Կոնստնտնուպոլսի աջ սյունակի մեջ ևս ծննդյան թվականը նշված է 1760:

Աղանուր (Aganoor), Աղանուրյան գերդաստանը տվել է բազմաթիվ հայրնի անձնավորություններ: 1792 թ. Հարություն Ծնավոնյան Շիրազեցու հրապարակած Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» պոեմի երկար չափածո հիշարակարանն ունի այս վկայությունը. «Յակոբայ որդեգիր Սահակին. Նոր Զողայոյ՝ թարվիզեցոյն, Աղայնուրեանց՝ յագգէն ասին, այժմ ի մաղրաս բնակողին...» (31): Լոնդոնի «Մասիս» ամսագրի փերրվար (1931) համարը ներառում է բժիշկ Միլաս Սյուսիանոս Պեպրոս Աղանուրի մահագրականը, որն ավելի քան երեսուն տարի Անգլիայի British Vice-Consul-ն էր Զողայում (32): Բրիտանական գրադարանի՝ վերջերս ձեռք բերված ձեռագրերի մեջ հայ-անգլիական հարաբերությունների ուսումնասիրության պարամության համար կարևոր փաստաթուղթ է Մանչեսթրի հայ համայնքի Շնորհակալական գիրը՝ ուղղված Պարսից Նասր-ալ-Դին արքային՝ հուլիս 4, 1889: Նամակի տակ ստորագրել են համայնքի չորս ներկայացուցիչներ, որոնցից մեկը Մ. Ս. Պեպրոս Աղանուրն է (33): Հայագի իրավաբանական հայրնի բանաստեղծուհի Վիկտորիա Աղանուր Պոմպեյլին (Victoria Aganoor, 1855-1910) այս ազնվական ընտանիքից էր՝ Մաղրասից գաղթած, ծնված Պաղոսայում: 1881-1890 թթ. ապրել է Նեապոլում (34):

Այս պարզավոր շարքում իր արժանի տեղն է գրավում այժմ Ն. Ն. Աղանուրյանը: Հայկ Դավթյանը չորս տարի ևս է վերագրում Աղանուրյանց Հարությունին.

«237. Գիրք սաղմոսաց Դարթի, որդույ Յեսսեայ: Հոմերական ուրուք չափեալ ի Յարութիւնէ Սահակեան Աղանուրեանց Նոր Զողայեցոյ: Կալկաթա, Կալ. Անկար Զնթում, 1815: Ըստ գրքի հիշարակարանին երգը հորինվել է 1805 թ. Բասրայում:

290. Գիրք դաւանութեան հաւատոյ առ ամենասուրբ Երրորդութիւն և միասնական աստուածութիւնն ի Հայր ևս յՈրդի ևս ի Սուրբ Հոգին: Յորինեալ հոմերական չափաբանութեամբ ի Յարութիւնէ Բասակեան Նոր Զողայեցոյ Աղանուրեանց կոչեցեալ: 1817, ի Կալկաթայ, ի Կալարանի Անկար Զնթումեանի:

389. Հրիարակ հօր ուրումն առ դստերս իւր: Զգուշաւորութեամբ յԱնգլիականէ ի մերս թարգմանեալ բարբառ երկասիրութեամբ պարոն Մ. Յ. Աղանուրեանց Մեծարոյ Աթո-

ռակայի և անդամոյ գերապարի Իմաստախնդեան Միաբանութեան: Տպ. Տպարանի Յորդանանեան պարոն Պողոսի, ի Յ. Տէր Յակոբեան, 1821» (35):

«Այբբենարան կամ Աղանութեան կարգ ուսմանց: Յօրինեալ ի պէտս նորավարժ մանկանց Մարդասիրական ճեմարանի: Կալկաթա, տպ. Մարդասիրական ճեմարանի, 1824» (36):

Ակներեւ փաստ է, որ Ն. Ն. Աղանույանը, որպէս հեղինակ իր՝ մինչեւ այսօր մեզ ծանոթ բոլոր գրքերը հրատարակել է «Աւեր և Յովհաննէս Զնթումի Աւերեան»-ի տպարանում, բացի վերջին գրքից, որի հրատարակության վայրը Կալկաթայի Նայոց Մարդասիրական ճեմարանի նորաստեղծ տպարանն էր: Այս հասկանալի է, որովհետեւ ըստ Դավթյանի մարենագիտության, Ավեր և Նովհաննէս Զնթում Ավերյանի տպարանում տպագրվել են 14 տպագրւմներ՝ 1811 թ. մինչև 1820 թ. (37):

Անգլերեն «Տաղ դիցագնական» օրհներգի հեղինակն անհայտ է: Ընդունված տեսակետն այն է, որ հեղինակը անգլիացի բանաստեղծ, երաժշտագետ, շարականագիր Ջոն Բուլլն (John Bull, c. 1562-1628) է (38): Մաղթանք հասցեագրումը հարմարեցվում է օրվա գահակալին: Ն. Ն. Աղանույանի ժամանակ մաղթանքն ուղղված է Գեորգ Գ. թագավորին (George III, 1738- 1820) (39): Այսօր նույն մաղթանքը, որպէս անգլիայի հիմներգ, երգվում է ի պատիվ թագուհու (God Save the Queen).

Եզրակացություն.

Ա. «Տաղ Դիցագնական ի վերայ նորին վեհափառութեանն Գեորգեայ Երրորդի օգոստոսիառ արքայի մեծին Բրիթանիոյ»-ն բառացի հայերեն թարգմանությունն է Անգլիական հիմներգի՝ An Heroick verse. In His most Excellent majesty George the third King of Great Britain՝ աշխարհասիրությամբ՝ Ն. Ն. Աղանույանից:

Բ. Գիրքը, որը պարունակում է այս մաղթանքը, նորահայտ է «Արքայ» վերնագրով՝ տպագրված Կալկաթայում Ավեր և Նովհաննէս Զնթում Ավերյանի տպարանում՝ 1819 թ.:

Գ. Սրբ Ռոբերթ Կեր Պորպերն իր հուշերում՝ արձանագրված հոկտեմբեր 29, 1819 թ., վկայում է, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում իր լսած երգը՝ «կատարված հայ աբեղայի կողմից, վերաբարդությունն էր իր ազգի՝ God Save the King՝ մաղթանքի»:

Նավեկյալ.

Այստեղ հայ գրականագետների և հայ-անգլերեն թարգմանական գրականությանը հետաքրքրվողների համար վերաբարդում են ողջ գրքի բովանդակությունը: Տե՛ս նաև Vrej Nersessian, 'Armenian' հոդվածը՝ **The Oxford Guide to Literature in English Translation**, edited by Peter France, Oxford University Press, 2000, էջ 190-193:

«Նախերգանք: Երաժշտականություն «Յոյժ պարսկական եմբ...»

3. Օրհներգություն: Առ հեղինակն Բնութեան

7. Տաղերգություն: Ի վերայ գեղեցկության գարնան

11. Յուսադրություն. «Ուր ոչ կարեմք՝ յամառութեամբ»

12. Նազներգություն. «Նայեաց և լուր սիրոյս տաղի»

15. Սէր իմ, սէր իմ անմահ. «Յորժամ դու յինէն սիրեալ»

[Նայերեն եւ անգլերեն հանդիպակաց էջերում]

18. Փայլիինն այգու = The Radiance of morn

Ժպտման կուսին պազաներով = The smile of the maid I adore

20. Գեղեցկությունն քո = Thy charms

Գերեաց զոգիս զեղ քո վաղուց = Thy charms have long enslaved my heart

22. Ան հեղինակս = To authors

Որք ամբաստանեն զկրից սիրոյ = That endite on the passion of love

24. Մ'էջ գիշերոյ = In the dead of the night

Մ'էջ գիշերոյ՝ յորժամ = In the dead of the night when

28. Ան Լաուրա = To Laura

Որքա՞ն երանեալ էր այգն սիրոյ = How happy was the moon of love,

30. Ան Սինթիա = To Cynthia

Ո՛վ դու, որոյ դեմքդ սիրաստուր = O thou! Whose love-inspiring air

32. Օրհներգություն = Hymn

Ան արեգակն ծագեալ = To the rising sun

36. Երգ հրաժարական Ողջունի = A Farewell song

Այրին երգոյ՝ ողջոյն քունեալ = Farewell to the fragrance of morn

Ան Լուսին = To Cynthia

Զինչ վիշտ ձգէ՝ յաչս այն վայլուն = What danger lurks in those bright eyes

38. Ելլեն = Ellen

Մինչ երեկն պարզէ զիր քող զաշխարհաւ = When evening draws her curtain round

40. Յուլիա = Julia

Կուսկիդոս ի յերկրի = Julia. Cupid on earth

Ասի թէ սերն՝ էր մինչ մանկիկ = 'Tis said when Love was yet a boy

52. Ան Լուսին

Թէ դիպի աչացս՝ ընդ այգն իմ Լուսին

53. Ակնարկություն Բնութեան

Նա զոր ես սիրեմ՝ զսէրն իմ խորէ

54. Տաղ Դիցազնական = An Heroic Verse

Ի վերայ նորին վեհափառութեանն Գեորգեայ Երրորդի = On His majesty most
Excellent majesty George the third

Օգոստափառ արքայի մեծին Բրիթանիոյ = King of Great Britain

Տէ՛ր, կեցո զարքայն = God Save the King

58. Ան Սիրակիցն = To Chloe

Ո՛վ սիրակից, բիր քո ջեռումն = Chloe, a thousand charms are thine

Ան Սիրակիցն = To Chloe

Թանգ սիրակից զառոյղն զիտեմ = Dear Chloe, well I know the twain

60. Վարդն = The Rose

Վարդն է չքնաղ ի մէջ ծաղկանց = Rose, the fairest; of all flowers

61. Փուշն = The Thorn

Ի փարսակաց՝ թանգ Սիրակիցս՝ զոսա մի խնդրեաց = From the white-blossom'd
slee my dear Chloe requested

62. Ասպղն առանձնասեր = The solitary star

Յորժամ ել յոյսն՝ վերջին լքեալ = When the last lingering hope was gone

64. Կարաերգութիւն = A Ballad

Յողբս սիրողին՝ Աղջիկն հեւեալ = The maid who pants for lover's sighs

66. Ընթացք Կեանացն Կորինայ = Corin's Profession

կամ or

Երգն Յարապետութեան = The Song of Constancy

Ամուսնացաք՝ արդ Ջոն = Now, John, we are married

70. Նախկին սերն կուսին = The Virgin's First Love

Քաղցր է բերկրանքն = Yes, sweet's the delight when our blushes impart

72. The Interview. To Chloe {only in English}

Come, let's enjoy the passing hour

74. Գարնանային նուագ սիրոյ: Առ լուսին

Յոյժ բերկրալի է՝ ժամն գարնան

75-79. Քաղցրահամ պտուղ շրթանց: Առ Լուսին ի քաղաքի

Թոյլ փուր ինձ աճիլ դիրանց յաշխարհին {միայն հայերէն, 19 փուն}

80- 84. Ծանօթութիւնք: Յափուկ անուանց պարտունակելոց յընթացս մաքենիս՝ ըստ
այբուբենի:

Ալեկպոռն, որ թարգմանի նախանձ. է սա մին ի յերից կապաղեացն դժոխոց, որ էր
դուստր Աքերոնի:

Տիսիփոռն. է սա մին ի յերից կապաղեացն դժոխոց, ունելով զգլխով իւրով զօճս փա-
փանեալս, որ եւ նստէր հանապազ ի դրան փարսարոսի (փնս ի գիրս Դիցաբանու-
թեան):

ՎԱՄՏԱՄՆ»

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Vrej Nersessian**, A Catalogue of the Armenian manuscript in the British Library acquired since the year 1913 and of collection in other libraries in the United Kingdom, The British Library, 2012, pp. 863-74, plate xxvii.

2. **Vrej Nersessian**, The Encyclical from Eprem, Catholicos of Armenia to Sir Gore Ouseley, 3 august 1813 (The British Library MS. Or. 15957), A Catalogue vol. II, pp. 863-874 and "Sir Ouseley's visit to Etchmiadzin and an important literary observation", Haykazian Hayagitakan Handes (2007), pp. 343-360.

3. **L. Daniel Elton**, Golestan Treaty, in Encyclopaedia Iranica, ed. by Ehsan Yarshater, vol. XI, Fasc. I, pp. 86, 90. Այս առնչությամբ արժան է հիշել, որ Եփրեմ Ամենայն Նայոց Կաթողիկոսն ունի նաև մի կոնդակ ուղղված «Անկլիացոյ դեսպան Կլաւդիոս Յակոբ Ռիչչի ... ի 14 Յունուարի 1811 ամի», որի մեջ Վեհափառ շնորհակալություն է հայտնում դեսպանին, որ «յոժարեալ էք ի գերեզմանէ հասարակաց անդրփոխել զմարմին հանգուցեալ Յակոբ Սրբազան Արք եպիսկոպոսին ի սուրբ եկեղեցիս հայոց» և, որ «խնամ քարջիք Վրթանէս վարդապետն հաւաքարիմ մեր ճանապարհորդել՝ կանխաւ առ մեզ»: Այս վարդապետը հիշվում է նաև Սրբ Գոր Օգլիին հասցեագրված կոնդակում: Տե՛ս **Dr. Vrej Nersessian**, Claudius James Rich: Diplomat, archaeologist and collector, The British Library, 9 october 1986 - 29 march 1987:

4. **Vrej Nersessian**, A Catalogue, p. 865:

5. **Vartan Grigorian**, "The impact of Russia on the Armenians and Armenia", in Russia and Asia. Essays on the influence of Russia on the Asian peoples, **S. Vucinich Wayne**, ed. Stanford, California, 1972, pp. 167-218. **A. George Bournoutian**, The Armenian Church and the Political formation of Eastern Armenia, Armenian Review 36, 3 (1983), pp. 7-17. **Կարապետ Եզեանց**, Ս. Էջմիածինի Մայր Աթոռի և Ռուսաց կառավարութեան յարաբերութիւնների ծագումը, Թիֆլիս, 1904:

6. **Լևո**, Երկերի ժողովածու, հ. VI, Երևան, 1984, էջ 381:

7. Տե՛ս անդ, էջ 359:

8. **Մսէր Մազիսպրոս Մսէրեանց**, Պատմություն կաթողիկոսաց Էջմիածնի ի Սիմեոն մինչ ցՅովհաննէս Ը. (1763-1831), ի Մոսկուա, 1876. **Վալերի Թունյան**, Եփրեմ Ա. Ջորագեղցի. «Ամենայն Նայոց Կաթողիկոսները», Ս. Էջմիածին, 2008, պր. Ա., էջ 83. **Մաղաքիա արքեպս. Օրմանեան**, Ազգապատում, հ. Գ., գիրք Ա., Պէրոյթ, 1961, էջ 3377-3626: Օրմանյանը ոչ մի րեղ չի հիշում Եփրեմ Կաթողիկոսի հանդիպման մասին Սրբ Գոր Օգլիին, իսկ նրա մահվան թվականը քաղաքական վրիպումով դրված է 1853՝ փոխանակ 1835:

9. **Vrej Nersessian**, A Catalogue, MS. Or. 16113, pp. 877-885, pl. xxvii.

10. **Reynolds, James**, The Rev., Biographical notices of Persian poets; with critical and

explanatory remarks by the late Right Honourable Sir Gore Ouseley, London, 1846, ccxvii-ccxviii.

11. **Sirarpie Der Nersessian**, The chester Beatty Library. A catalogue of Armenian manuscripts, with an introduction on the history of Armenian art, Dublin, 1958, vol. I, pp. 103, 105-106.

12. Նայ-անգլիական քաղաքական հարաբերությունների ուսումնասիրության համար Եփրեմ Կաթողիկոսի օրոք կարևոր սկզբնաղբյուրներ են այս ժամանակակից ճամփորդողների հուշերը: **Memoir of the Rev. Henry Martyn**, 2nd edition, London, 1819, pp. 438-483. **James Morier**, A second journey through Persia, Armenia and Asia Minor, to Constantinople between the years 1810 and 1816... together with an account of the Proceedings of His Majesty's embassy under His Excellency Sir Gore Ouseley, London, 1918. **Jaubert, P. Amedee**, Voyage en Armenie et en Perse fait dans les annees 1805 et 1806, Paris, 1821. **Sir Robert Ker Porter**, Travels in Georgia, Persia, Armenia, Ancient Babylonia &c. &c. During the years 1817, 1818, 1819 and 1820, vol. I, pp. 186-194, vol. II (London, 1822), pp. 304-636. Letters from the Caucasus and Georgia; to which are added the account of a journey into Persia in 1812 and an abridged history of Persia since the time of Nadir Shah, translated from the French, London, 1823, pp. 276-283. **E. Ingram**, Britain's Persian connections 1798- 1828, Oxford, 1828.

Սրբ Ռաբերթ Կեր Պորտերը հեղուկալ դիպրությունն ունի Եփրեմ Ամենայն Նայոց Կաթողիկոսի մասին. "He has a high reputation for learning and piety; and enhances the value of both, by much of the useful sort of knowledge which can only be gained in the world at large. He has travelled over the chief countries of Asia; and passed some time at Calcutta, during the government of Earl Cornwallis" (p. 186). **Sir Charles Cornwallis** (1738-1805) անգլիական բանակի ընդհանուր հրամանատարն էր Կալկաթայում 1795-1801 թվականներին:

13. **Vrej Nersessian**, Kondak, or Encyclical Letter of the Catholicos Eprem 1st Jorageghtsi to Sir Robert Porter, Sotheby's tuesday 26th november, 1985, lot. 169.

14. **Sir Robert Ker Porter**, Travels, vol. I, pp. 186-194.

15. **Sir Robert Ker Porter**, Travels, vol. II, pp. 634-635.

16. Տե՛ս անդ, էջ 635:

17. Տե՛ս **Vrej Nersessian**, The Encyclical from Eprem, 2007, էջ 356:

18. **Լևո**, Երկերի ժողովածու, Երևան, 1987, հ. VI, էջ 835:

19. **Ա. Կիրակոսյան**, Նայ պարբերական մամուլի մարեմագիպություն (1794-1967), Նամահավաք ցանկ, Երևան, 1970, էջ 191 (հմ. 1213):

20. **Ա. Կիրակոսյան**, անդ, էջ 118 (հմ. 681):

21. Տե՛ս **Լևո**, Երկերի ժողովածու, հ. VI, էջ 834:

22. **Գրիգոր Նարությունյան**, Նորհայր նյութեր Մեսրոպ Թաղիադյանի մասին. «Էջմիածին», 1947, թ. Գ.-Դ., էջ 31-43:

23. **Մ. Մ. Միանասարեանց**, Բնար հայկական, Ս. Պետրեբուրգ, 1868:

24. **Սիմոն Սիմոնեան**, Արևելահայ գրականություն: Ընդիր էջեր, Պէրոթ, 1965, էջ 4:
25. **Գրիգոր առ. քին. Գրիգորեանց**, Սոխակ Նայասարանի. ազգային լիակատար երգարան, Բագու, 1912, էջ 271-72:
26. **Արշակ Այաօյան**, Արևմտած սիւրբեր. «Տէր, կեցո դու զՆայս» երգին հեղինակը. «Արմանի Տարեգիրք» Ա. տարի (1937-1938), էջ 117-121:
27. **Արշակ Այաօյան**, Նամակ խմբագրութեան. ճշգրտմ մը. «Էջմիածին», 1947, թ. Թ.-Ժ., էջ 95:
28. **Արշակ Այաօյան**, Նամակ խմբագրութեան, էջ 95:
29. Տէն Ն. **Անտեան**, Նայոց անձնանունների բառարան, Երևան, 1942, հ. Ա., էջ 98:
30. **Vrej Nersessian**, A Catalogue, MS. Or. 14359, pp. 970-972.
31. **Ն. Ա. Ոսկանյան**, Նայ գիրքը 1512-1800 թվականներին: Նայ հնարիւղ գրքի մատենագիտություն, Երևան, 1988, էջ 664, հմ. 873:
32. Տէն "Obituary of Dr. M. S. P. Aganoor", in Massis an organ of Armenikan Interests (march 1931), p. 113. see also (january 1931), էջ 62-63 on Pr. Stephen Aganoor.
33. Տէն **Vrej Nersessian**, A Catalogue, MS. Or., 16113, էջ 877-885, pl. xxvii:
34. «Աղանոր», Նայկական սովորական հանրագիտարան, Երևան, 1974, հ. 1, էջ 246.
- Արսէն Ղազիկեան**, Նայկական նոր մատենագիտություն եւ հանրագիտարան հայ կեանքի, Վենետիկ, 1909, էջ 105:
35. **Նայկ Դավթյան**, Նայ Գիրքը 1801-1850 թվականներին: Մատենագիտություն, Երևան, 1967, էջ 98 (հմ. 389):
36. Տէն անդ, էջ 69-ի (հմ. 267) ծանոթագրությունը:
37. Տէն **Նայկ Դավթյան**, նշվ. աշխ., հմմ. 165-66 (1811), 189 (1812), 206 (1813), 217-220 (1814), 237-238 (1815), 265-66 (1816), 290 (1817):
38. Տէն **Bull John** (1563?-1628), The Concise Dictionary of National Biography, Oxford University Press, 1992, vol. I, էջ 386:
39. "George III (George William Frederick)", The Concise Dictionary of National Biography, vol. II, pp. 1124-1125. **R. F. Tapsell**, Monarchs, Rulers, Dynasties and Kingdoms of the World, London, 1987, p. 176.